

Համառոտ հաղորդումներ

УДК 635.936.692.6

ՇԱՐՈ ՄԵԽԱԿԻ ԻՆՔՆԱԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ի. Մ. ՍԱՅԱՐՅԱՆ, Լ. Ն. ԴԱՂԱՔՅԱՆ

Շարո մեխակի հետ տարվող սելեկցիոն-սերմնաբուծական աշխատանքների ընթացքում կարևոր նշանակություն ունի ինքնափոշոտման և ինքնաբեղմնավորման հարցերի ուսումնասիրությունը:

Շարո մեխակի ծաղկման, փոշոտման և բեղմնավորման հարցերի վերաբերյալ գրականության մեջ համեմատաբար քիչ ուսումնասիրություններ կան, իսկ ինքնափոշոտման և ինքնաբեղմնավորման մասին նշվում է միայն, որ տեղի է ունենում ինչպես ինքնափոշոտում, այնպես էլ խաչաձև փոշոտում [1—5]:

Ելնելով հարցի կարևորությունից, մենք նպատակադրվեցինք պարզել մեխակի ինքնափոշոտման և ինքնաբեղմնավորման հարցերը՝ Հայաստանի պայմաններում:

Նյութ և մեթոդ: Փորձերը իրականացվել են 1972—74 թթ. ընթացքում, երկրագործությունից ինստիտուտի բույսերի գենետիկայի բաժնում:

Ուսումնասիրությունները տարվել են Սպիտակ և Օգնենի կորոլ սորտերի վրա, հետևյալ տարբերակներով: 1. Գլխավոր և երկրորդական ծաղկակոկոնների մեկուսացում կալկայից, ծակոտկեն կալկայից (մեկուսիչը ծակծրկվել է ասեղով, 0,5 սմ հեռավորությամբ՝ օդի հարաբերական խոնավության և ջերմության լավ պայմաններ ստեղծելու նպատակով), թանդիվից և բամբակից պատրաստված մեկուսիչներով՝ առանց հետագա միջամտության: 2. Փոշոտում նույն սորտի սահմանում: 3. Փոշոտում բնական պայմաններում (ստուգիչ): Փորձերը իրականացվել են 2 ժամկետով՝ բույսերի ծաղկման սկզբում (հուլիսի 1-ին տասնօրյակ) և մասսայական ծաղկման ժամանակ (օգոստոսի 2-րդ տասնօրյակ): Ծաղկակոկոնների մեկուսացումը կատարվել է բացօթյա պայմաններում 2—3 օր առաջ:

Արդյունքներ և լննարկում: Ստացված տվյալներից (աղ), երևում է, որ Շարո մեխակի տարբեր սորտերի մոտ, բնական պայմաններում, ստացվում է 45,5—72,0% պտղակալման արդյունք, իսկ ծաղկակոկոնները տարբեր մեկուսիչներով մեկուսացնելու դեպքում (առանց հետագա միջամտության) ստացվում է 4,0—56,0% պտղակալում: Համեմատաբար ցածր արդյունք է ստացվում ծաղկակոկոնները բամբակից պատրաստված մեկուսիչներով մեկուսացնելիս, որի դեպքում ստեղծվում են օդի հարաբերական խոնավության և ջերմության ավելի վատ պայմաններ:

Մեխակի ինքնաբեղմնավորումը (Շաբո-Օգեննի կորոլ)

Տարբերակներ	Փլիթավոր ցողունների ծաղիկներ						Երկրորդական ցողունների ծաղիկներ							
	Վերջի կատարման ժամանակը	մեկուսացված ծաղիկոկոնների քանակը, հատ.			կազմակերպված սերմնատուփիկները, %			Վերջի կատարման ժամանակը	մեկուսացված ծաղիկոկոնների քանակը, հատ.			կազմակերպված սերմնատուփիկներ, %		
		1972	1973	1974	1972	1973	1974		1972	1973	1974	1972	1973	1974
կալիա	1—10/7	50	50	50	16,0	22,0	18,0	1—10/7	50	50	42	18,0	24,0	16,6
կալիա	11—20/8	20	25	25	20,0	40,0	40,0	11—20/8	25	25	25	12,0	40,0	32,0
կալիա ծակոտկեն	1—10/7	40	45	40	27,5	44,4	25,0	1—10/7	50	40	50	30,0	47,5	40,0
կալիա ծակոտկեն	11—20/8	20	25	20	20,0	52,0	30,0	11—20/8	25	25	25	24,0	40,0	44,0
Բամբակ	1—10/7	50	50	45	4,0	14,0	6,6	1—10/7	50	40	50	10,0	7,5	14,0
Բամբակ	11—20/8	25	25	25	8,0	12,0	20,0	11—20/8	25	20	21	12,0	20,0	23,8
Թանգիֆ	1—10/7	45	50	50	48,0	54,0	42,0	1—10/7	50	50	42	36,0	50,0	47,6
Թանգիֆ	11—20/8	25	25	22	52,0	44,0	50,0	11—20/8	25	25	24	32,0	56,0	45,8
Փոշոտում բնական պայմաններում (ստուգիչ)	1—10/7	50	50	50	70,0	50,0	54,0	1—10/7	50	50	40	58,0	64,0	50,0
	11—20/8	25	25	20	52,0	64,0	60,0	11—20/8	25	25	25	52,0	60,0	72,0
Փոշոտում նույն սորտի սահմանում	11—20/8	90	25	25	61,1	72,0	60,0	11—20/8	90	25	25	41,1	72,0	52,0

Այսպիսով, Շաբո մեխակի տարբեր սորտերի մոտ Հայաստանի պայմաններում տեղի է ունենում ինքնաբեղմնավորում, որը կազմում է 4,0—56,0%, հետևաբար, սելեկցիոն-սերմնարուծական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է կատարել առէջքների հեռացում:

Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտ

Ստաջված է 13. VI. 1979 թ.

САМООПЛОДОТВОРЕНИЕ У ГВОЗДИКИ ШАБО

И. М. САФАРЯН. Л. Н. ДАЛАҚЯН

Исследованиями установлено, что в условиях Армении у гвоздики Шабо происходит самооплодотворение (4,0—56,0%).

Л И Т Е Р А Т У Р А

1. Главинич Р. Д., Ростункова Л. Ф. Цветоводство, 3, 11, 1975.
2. Гусев М. М. Автореф. на соискание уч. ст. канд. биол. наук. Ереван, 1961.
3. Поляница Г. И., Шестаченко Г. Н. Цветоводство, 8, 14, 1977.
4. Справочник цветовода. 348, М., 1971.
5. Хорьков Е. И., Лапочкина М. Н. Экспериментальная биология сельскохозяйственных растений. Научные тр. 76, М., 1971.